2711գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

# ՕՐԷՆՔՆԵՐԻ ՀԱՒԱՔԱԾՈՒ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ

1919 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 5 ԵՐԵՒԱՆ № 6

ՑԱՆԿ.

56. Աշտարակի Նորակազմ Քաղաքային Ինքնավարութեանը 100.000 ր. վարկ բանալու մասին.

57. Զեմստվոյական հաստատութիւններ հիմնելու վերաբերեալ, 1919 թ. մայիս 28-ի հրատարակուած օրէնքի փոփոխման մասին.

58. Ֆինանսների Նախարարին 400 000 000 ր. չէկերի տպագրութեան ծախսերի համար 3.090.000 ր. վարկ բանալու մասին.

59. 400.000.000 ր. չէկեր բաց թողնելու մասին.

60. Ֆինանսների Նախարարին 100.000 000 ր. չէկերի տպագրութեան ծախսի համար 900.000 րուբլու վարկ բանալու մասին.

61. Արդարադատութեան Նախարարութեան նախահաշւի § 10 յօդ. 2ա-ից 24705 ր. 55 կ. նոյն նախահաշւի § 2 յօդ. 5-ը փոխանցելու մասին.

62. Երաժշտական դասընթացների պահպանութեան համար Հանրային Կրթութեան եւ Արւեստի Նախարարութեան 45.600 ր. վարկ բանալու մասին.

63. Դատական պաշտօնի թեկնածուների մասին.

64. Դատական պաշտօնի աւագ թեկնածուի կոչում կրելու մասին.

65. Բամբակի մենավաճառութեան 1919 թ. սեպտեմբերի 11-ի օրէնքի լրացման մասին.

66. Երեւանում «Հասցէների Բիւրօ» հիմնելու համար Ներքին Գործերի Նախարարին 125.600 ր. վարկ բանալու մասին.

67. Նախարարների Խորհրդին չնախատեսնուած եւ արտակարգ-պետական կարիքների համար 10 000.000 ր. վարկ բանալու մասին.

68. Ալէքսանդրապոլի քաղաքային Ինքնավարութեան դպրոցներում երեք նոր բաժանմունք բանալու համար 46 500 ր. լրացուցիչ վարկ բանալու մասին.

69. Պատգամաւորներին արտակարգ դէպքերում միանւագ նպաստ տալու համար Պարլամենտի Նախագահութեան քառասուն հազար ր. վարկ բանալու մասին.

70. Կառավարութեան կողմից Պարլամենտ մտնող օրինագծերի ձեւի մասին.

71. Պարլամենտի Նախագահութեան տպագրական թուղթ գնելու համար 50.000 վարկ բանալու մասին.

14251

## ՕՐԷՆՔ

### 56. Աշտարակի Նորակազմ Քաղաքային Ինքնավարութեանը 100,000 ռուբլի վարկ բանալու մասին.

Հաստատուած է 1919 թ. Նոյեմբերի 18-ին

Բանալ Ներքին Գործերի Նախարարութեան հարիւր հազար ռուբլու վարկ՝ Աշտարակի նորակազմ Քաղաքային Ինքնավարութեան մի տարի ժամանակով և 3 տոկոսով պարտք տալու համար.

Փոխ-Նախագահ Պարլամենտի՝ Ա. Սահակեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տ. Յակոբեան

1919 թ. Նոյեմբերի 19
Երևան։

## ՕՐԷՆՔ

### 57. Զեմստվօյական հաստատութիւններ հիմնելու վերաբերեալ 1919 թ. մայիս 23-ին հրատարակուած օրէնքի փոփոխման մասին։

Հաստատուած է 1919 թ. Նոյեմբերի 18-ին

1919 թ. Մայիսի 23-ի զեմստվօյական հաստատութիւններ հիմնելու մասին հրատարակուած օրէնքի յաւելուածի 10-րդ յօդուածում յիշատակուած երկու հարիւր հազար ռուբլի գումարը փոխարինել հինգ հարիւր հազար ռուբլով։

Փոխ Նախագահ Պարլամենտի՝ Ա. Սահակեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակոբեան

1919 թ. Նոյեմբեր 19
Երևան

## ՕՐԷՆՔ

### 58. Ֆինանսների Նախարարին չորս հարիւր միլիօն ռուբլու չէկերի տպագրութեան ծախսերի համար երեք միլիօն իննսուն հազար ռ. վարկ բանալու մասին.

Հաստատուած է 1919 թ. Նոյեմբերի 20-ին.

Բանալ Ֆինանսների Նախարարին երեք միլիօն իննսուն հազար



ռուբլու վարկ՝ չորս հարիւր միլիօն ռուբլու չէկեր կամ այլ դրամանիշներ տպագրելու ծախսերը հոգալու համար։

Փոխ Նախագահ Պարլամենտի՝ Ա. Սահակեան
Ի տեղի Աւագ քարտուղարի՝ Ա. Սաֆրաստեան

1919 թ. Նոյեմբերի 21
Երևան

## ՕՐԷՆՔ

### 59. Չորս հարիւր միլիօն ռուբլու չէկեր բաց թողնելու մասին.

Հաստատուած է 1919 թ. Նոյեմբերի 20-ին

Թոյլատրել Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան բաց թողնել, պետական բանկի երևանեան բաժանմունքի աջակցութեամբ կամ այլ ճանապարհով, չորս հարիւր միլիօն ռուբլու չէկեր կամ այլ դրամանիշներ աստիճանաբար ըստ կարիքի։

Փոխ Նախագահ Պարլամենտի՝ Ա. Սահակեան
Ի տեղի Աւագ քարտուղարի Ա. Սաֆրաստեան

1919 թ. Նոյեմբերի 21
Երևան

## ՕՐԷՆՔ

### 60. Ֆինանսների Նախարարին հարիւր միլիօն ռ. չէկերի տպագրութեան ծախսի համար ինը հարիւր հազար ռուբլու վարկ բանալու մասին.

Հաստատուած է 1919 թ. Նոյեմբերի 20-ին

Բանալ Ֆինանսների Նախարարին ինը հարիւր հազար ռուբլու վարկ հարիւր միլիօն ռուբլու բաց թողած չէկերի տպագրութեան ծախսերը հոգալու համար։

Փոխ-Նախագահ Պարլամենտի՝ Ա. Սահակեան
Ի տեղի Աւագ քարտուղարի՝ Ա. Սաֆրաստեան

1919 թ. Նոյեմբերի 21
Երևան.

## ՕՐԷՆՔ

### 61. Արդարադատութեան Նախարարութեան Նախա-

**հաշուի § 10 յօդ. 2ա-ից 21705 ր. 35 կ. նոյն նախահաշուի § 2 յօդ. 5-ը փոխանցելու մասին.**

Հաստատուած է 1919 թ. Նոյեմբերի 21-ին.

Թոյլ տալ Արդարադատութեան Նախարարութեան նախահաշուի § 10 յօդ. 2ա ից «ճանապարհածախքի և օրապահիկի» քսան մէկ հազար եօթը հարիւր հինգ րուբլի 35. կ. փոխադրել նոյն նախահաշուի § 2ա յօդ. 5-ը (գիւտնական և տնտեսական ծախքերի)։

Փոխ Նախագահ Պարլամենտի՝ Ա. Սահակեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակոբեան

1919 թ. Նոյեմբերի 22
Երևան

## ՕՐԷՆՔ

### 62. Երաժշտական դասընթացների պահպանութեան համար Հանրային Կրթութեան և Արուեստի Նախարարութեան 43.600 ր. վարկ բանալու մասին.

Հաստատուած է 1919 թ. Նոյեմբերի 24-ին

Բանալ Հանրային Կրթութեան և Արուեստի Նախարարութեան քառասուն երեք հազար վեց հարիւր րուբլու վարկ (միանւագ 35.000 ր. և երկամսեայ—1919 թ. նոյեմբեր—դեկտեմբեր) երաժշտական դասընթացների ծախսերը հոգալու համար։

Փոխ Նախագահ Պարլամենտի՝ Ա. Սահակեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակոբեան

1919 թ. Նոյեմբերի 25
Երևան

## ՕՐԷՆՔ

### 63. Դատական պաշտօնի թեկնածուների մասին.

Հաստատուած է 1919 թ. Նոյեմբերի 24-ին.

Դատական Հաստ. Հիմնարկի 407 յօդուածին կցել հետևեալ ծանօթութիւնը

Ծանօթ. Առժամապէս դատական պաշտօնի թեկնածուներ կարող են նշանակ-



ուել նաև այն անձինք, որոնք լսել են ռուսական համալսարանների իրաւաբանական բաժնում ութ սեմեստր և ունեն համապատասխան վկայականներ, ինչպէս և ոչ-ռուսական համալսարաններում ուսած այն անձինք, որոնք կներկայացնեն վկայականներ, որ անցել են իրաւաբանական գիտութիւնների լրիւ դասընթացը։

Փոխ-Նախագահ Պարլամենտի՝ Ա. Սահակեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տ. Յակոբեան

1919 թ. Նոյեմբերի 25
Երևան.

## ՕՐԷՆՔ

### 64. Դատական պաշտօնի աւագ թեկնածուի կոչում կրելու մասին.

Հաստատուած է 1919 թ. Նոյեմբերի 24-ին.

Դատ. Հաստ. Հիմնարկի 409 յօդուածը խմբագրել այսպէս.—

Աւագ թեկնածուի կոչում տրւում է նրանց, որոնք Շրջանային Դատարանից կամ Դատաստանական Պալատից կներկայացնեն վկայագիր այն մասին, որ ունեն համապատասխան պատրաստութիւն ու փորձառութիւն ինքնուրոյն կերպով դատական գործեր վարելու համար։

Փոխ Նախագահ Պարլամենտի՝ Ա. Սահակեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակոբեան

1919 թ. Նոյեմբերի 25
Երևան.

## ՕՐԷՆՔ

### 65. Բամբակի մենավաճառութեան 1919 թ. սեպտեմբերի 11-ի օրէնքի լրացման մասին.

Հաստատուած է 1919 թ. Նոյեմբերի 25-ին.

Ի լրացումն բամբակի մենավաճառութեան 1919 թ. սեպտեմբերի 11-ի օրէնքի՝ սահմանել,

1. Բոլոր բամբակատէրերը պարտաւոր են մինչև 1919 թ. դեկտեմբերի 31-ը պետական մենավաճառութեան պահեստներից որ և է մէկին յանձնել իրենց մօտ եղած ամբողջ բամբակը, հա-

կատակ դէպքում չըյանձնուած բամբակը որպէս ապօրինի թագցրած յարքունիս կըգրաւուի.

2. Ֆինանսների Նախարարին իրաւունք է տրւում թագցրած բամբակը յայտնագործողներին վարձատրել այդ բամբակի արժէքի երկու երրորդականի չափով՝ հաշւելով բամբակի փութը մամլածի՝—49 ր. 50 կ..մաքրած, ոչ մամլածի—43 ր. 50 կ. և հունդաւորի՝—25 ր.

Փոխ Նախագահ Պարլամենտի՝ Ա. Սահակեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակոբեան

1919 թ. Նոյեմբերի 26
Երևան

## ՕՐԷՆՔ

### 66. Երևանում «Հասցէների Բիւրօ» հիմնելու համար Ներքին Գործերի Նախարարին 123.600 ր. վարկ բանալու մասին.

Հաստատուած է 1919 թ. Նոյեմբերի 25-ին.

Բանալ Ներքին Գործերի Նախարարին հարիւր քսան երեք հազար վեց հարիւր րուբլու վարկ Երևանում հիմնելու «Հասցէների Բիւրօ»-ի մի ամսւայ—դեկտեմբերի 1-ից սկսած ծախքերը հոգալու համար:

Փոխ-Նախագահ Պարլամենտի՝ Ա. Սահակեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տ. Յակոբեան

1919 թ. Նոյեմբերի 26
Երևան:

## ՕՐԷՆՔ

### 67. Նախարարների Խորհրդին չընախատեսնուած և արտակարգ պետական կարիքների համար տասը միլիօն ր. վարկ բանալու մասին

Հաստատուած է 1919 թ. Նոյեմբերի 27-ին.

Բանալ Նախարարների Խորհրդին, Մինիստր—Նախագահի անունով, տասը միլիօն րուբլու վարկ չնախատեսնուած և արտակարգ պետական կարիքների համար:

Փոխ Նախագահ Պարլամենտի՝ Ա. Սահակեան
Աւագ քարտուղար Յ. Տէր Յակոբեան

1919 թ. Նոյեմբերի 28
Երևան



## ՕՐԷՆՔ

### 68. Ալէքսանդրապօլի քաղաքային Ինքնավարութեան դպրոցներում երեք նոր բաժանմունք բանալու համար 16.500 ր. լրացուցիչ վարկ բանալու մասին.

Հաստատուած է 1919 թ. Նոյեմբերի 27-ին.

Բանալ Հանրային կրթութեան և Արւեստի Նախարարութեան անունով տասն և վեց հազար հինգ հարիւր րուբլու վարկ չորս ամսւան նպաստ տալու Ալէքսանդրապօլի Քաղաքային Ինքնավարութեան դպրոցներում երեք նոր բաժանմունք բանալու համար:

Փոխ Նախագահ Պարլամենտի՝ Ա. Սահակեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակոբեան

1919 թ. Նոյեմբերի 28
Երևան

## ՕՐԷՆՔ

### 69. Պատգամաւորներին արտակարգ դէպքերում միանւագ նպաստ տալու համար Պարլամենտի Նախագահութեան քառասուն հազար ր. վարկ բանալու մասին.

Հաստատուած է 1919 թ. Նոյեմբերի 27-ին.

1. Բանալ Պարլամենտի Նախագահութեան անունով քառասուն հազար րուբլու վարկ պատգամաւորներին արտակարգ դէպքերում միանւագ նպաստ տալու համար:

2. Սոյն նպաստի բաշխումը կատարում է Պարլամենտի Նախագահութիւնը:

Փոխ Նախագահ Պարլամենտի՝ Ա. Սահակեան
Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակոբեան

1919 թ. Նոյեմբերի 28
Երևան

## ՕՐԷՆՔ

### 70. Կառավարութեան կողմից Պարլամենտ մտնող

օրինագծերի ձևի մասին.

Հաստատուած է 1919 թ. Նոյեմբերի 28-ին.

Իւրաքանչիւր օրինագիծ, որ կառավարութեան կողմից մտնում է Հայաստանի Պարլամենտ, պէտք է կրէ Վարչապետի և համապատասխան Նախարարի ստորագրութիւնները, իսկ ֆինանսական բնոյթ ունեցող օրէնսգծերը նաև Ֆինանսների Նախարարի ստորագրութիւնը։

Փոխ Նախագահ Պարլամենտի՝ Ա. Սահակեան

Ի տեղի Աւագ քարտուղարի՝ Ա. Սաֆրաստեան

1919 թ. Նոյեմբեր 29

Երևան

## Օ Ր Է Ն Ք

### 71. Պարլամենտի Նախագահութեան տպագրական թուղթ գնելու համար 50.000 ր. վարկ բանալու մասին.

Հաստատուած է 1919 թ. Նոյեմբերի 28-ին.

Բանալ Պարլամենտի Նախագահութեան անունով յիսուն հազար ռուբլու վարկ «Օրէնքների Հաւաքածու»-ի և Պարլամենտի գործերի տպագրութեան համար թուղթ գնելու նպատակով։

Փոխ Նախագահ Պարլամենտի՝ Ա. Սահակեան

Աւագ քարտուղար՝ Յ. Տէր Յակոբեան

1919 թ. Նոյեմբեր 28

Երևան

Էլեկտրաշարժ տպարան Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի.

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL014686